# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 lusinmat001@gmail.com

## ՈՐՈՇՈՒՄ

15 հունիսի 2021 թվականի թիվ 36

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15 -Ի ԹԻՎ 5 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 15-ի թիվ 5 նիստի հետևյալ օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ջրառատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող և Այգաբաց բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն համարվող գույքը Ախուրյանի «Այգաբաց մանկապարտեզ» և Ախուրյանի «Կամոյի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց, անժամկետ օգտագործման տրամադրելու մասին
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում /բնակավայր Ախուրյան/ Միքայել Անտոնյանի կողմից ինքնակամ կառուցված, օրինական ճանաչված և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն համարված բնակավայրերի նպատակային նշանակության շինությունը և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասը նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով կառուցապատողին օտարելու մասին
4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում /բնակավայր Ախուրյան/ Սամվել Շեկոյանի կողմից ինքնակամ կառուցված, օրինական ճանաչված և Հայաստանի

Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն համարված բնակավայրերի նպատակային նշանակության շինությունները և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասը նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով կառուցապատողին օտարելու մասին
5.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Կառնուտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը գումար տրամադրելու մասին

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝**

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ժ. ԳԱԲՈՅԱՆ

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ա. ԴՐՄԵՅԱՆ

Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա. ՀԱՄԻԿՅԱՆ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Լ. ՂԱԶԱՐՅԱՆ

Տ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Մ. ՄՆԱՑՅԱՆ

Ա. ՄՔՈՅԱՆ

Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԼԻՊԱՐԻՏ ՏԻԳՐԱՆՅԱՆ**
/փոխարինող/

2021թ. հունիսի 15
գ. Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 lusinmat001@gmail.com

## ՈՐՈՇՈՒՄ

15 հունիսի 2021 թվականի թիվ 37

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՌԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՎ ԱՅԳԱԲԱՑ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, 76-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ջրառատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող և Այգաբաց բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերը վարձակալության իրավունքով մրցութային կարգով տրամադրել օգտագործման:

2.Հաստատել վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մրցույթի պայմաններն ու վարձավճարի մեկնարկային չափերը՝ համաձայն հավելվածի:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝**

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ժ. ԳԱԲՈՅԱՆ

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ա. ԴՐՄԵՅԱՆ

Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա. ՀԱՄԻԿՅԱՆ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Լ. ՂԱԶԱՐՅԱՆ

Տ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Մ. ՄՆԱՑՅԱՆ

Ա. ՄՔՈՅԱՆ

Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**ԼԻՊԱՐԻՏ ՏԻԳՐԱՆՅԱՆ**
/փոխարինող/

2021թ. հունիսի 15
գ. Ախուրյան

Հավելված

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ախուրյան
համայնքի ավագանու 2021 թվականի
հունիսի 16-ի թիվ 37 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՌԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՎ ԱՅԳԵԲԱՑ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ

| h/h | Հողամասի գտնվելու վայրը | Հողամասի կադաստրային ծածկագիրը | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողա մասի գործառնական նշանակությունը /հողատեսքը/ | Հողա մասի մակերեսը | Հողամասի որակական հատկանիշը | | Օգտագործման տրամադրման նպատակը | Հաղորդակցության ուղիների առկայությունը | Հողամասի նկատմամբ սահմանափ. | Մրցույթի ձևը | Վարձակալության ժամկետը | Վարձավճարի մեկնարկային չափը /1 հա համար/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Հողի կարգ | Ջրովի /անջրդի | | | | | | |
| 1 | Ջրառատ | 08-097-0252-0001 | գյուղատնտեսական | խոտհարք | 4.99977 | II | անջրդի | Գյուղ.գործունեության ծավալուն | Առկա է | չկան | բաց | 5 տարի | 6000 |
| 2 | Ջրառատ | 08-097-0252-0001 | գյուղատնտեսական | խոտհարք | 4.99518 | II | անջրդի | Գյուղ.գործունեության ծավալուն | Առկա է | չկան | բաց | 5 տարի | 6000 |
| 3 | Ջրառատ | 08-097-0252-0001 | գյուղատնտեսական | խոտհարք | 4.94202 | II | անջրդի | Գյուղ.գործունեության ծավալուն | Առկա է | չկան | բաց | 5 տարի | 6000 |
| 4 | Ջրառատ | 08-097-0252-0001 | գյուղատնտեսական | խոտհարք | 4.99215 | II | անջրդի | Գյուղ.գործունեության ծավալուն | Առկա է | չկան | բաց | 5 տարի | 6000 |
| 5 | Ջրառատ | 08-097-0252-0001 | գյուղատնտեսական | խոտհարք | 4.98326 | II | անջրդի | Գյուղ.գործունեության ծավալուն | Առկա է | չկան | բաց | 5 տարի | 6000 |
| 6 | Ջրառատ | 08-097-0252-0001 | գյուղատնտեսական | խոտհարք | 4.99795 | II | անջրդի | Գյուղ.գործունեության ծավալուն | Առկա է | չկան | բաց | 5 տարի | 6000 |
| 7 | Ջրառատ | 08-097-0252-0001 | գյուղատնտեսական | խոտհարք | 4.99747 | II | անջրդի | Գյուղ.գործունեության ծավալուն | Առկա է | չկան | բաց | 5 տարի | 6000 |
| 8 | Ջրառատ | 08-097-0252-0001 | գյուղատնտեսական | խոտհարք | 4.99768 | II | անջրդի | Գյուղ.գործունեության ծավալուն | Առկա է | չկան | բաց | 5 տարի | 6000 |
| 9 | Ջրառատ | 08-097-0252-0001 | գյուղատնտեսական | խոտհարք | 4.99344 | II | անջրդի | Գյուղ.գործունեության ծավալուն | Առկա է | չկան | բաց | 5 տարի | 6000 |
| 10 | Ջրառատ | 08-097-0252-0001 | գյուղատնտեսական | խոտհարք | 4.97578 | II | անջրդի | Գյուղ.գործունեության ծավալուն | Առկա է | չկան | բաց | 5 տարի | 6000 |
| 11 | Ջրառատ | 08-097-0252-0001 | գյուղատնտեսական | խոտհարք | 4.97073 | II | անջրդի | Գյուղ.գործունեության ծավալուն | Առկա է | չկան | բաց | 5 տարի | 6000 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 12 | Ջրառատ | 08-097-0252-0001 | գյուղատնտեսական | խոտհարք | 4.99862 | II | անջրդի | Գյուղ.գործունեության ծավալում | Առկա է | չկան | բաց | 5 տարի | 6000 |
| 13 | Ջրառատ | 08-097-0252-0001 | գյուղատնտեսական | խոտհարք | 4.98760 | II | անջրդի | Գյուղ.գործունեության ծավալում | Առկա է | չկան | բաց | 5 տարի | 6000 |
| 14 | Ջրառատ | 08-097-0252-0001 | գյուղատնտեսական | խոտհարք | 4.99084 | II | անջրդի | Գյուղ.գործունեության ծավալում | Առկա է | չկան | բաց | 5 տարի | 6000 |
| 15 | Ջրառատ | 08-097-0252-0001 | գյուղատնտեսական | խոտհարք | 4.98018 | II | անջրդի | Գյուղ.գործունեության ծավալում | Առկա է | չկան | բաց | 5 տարի | 6000 |
| 16 | Ջրառատ | 08-097-0252-0001 | գյուղատնտեսական | խոտհարք | 4.99992 | II | անջրդի | Գյուղ.գործունեության ծավալում | Առկա է | չկան | բաց | 5 տարի | 6000 |
| 17 | Ջրառատ | 08-097-0251-0001 | գյուղատնտեսական | խոտհարք | 4.99935 | II | անջրդի | Գյուղ.գործունեության ծավալում | Առկա է | չկան | բաց | 5 տարի | 6000 |
| 18 | Ջրառատ | 08-097-0251-0001 | գյուղատնտեսական | խոտհարք | 4.99880 | II | անջրդի | Գյուղ.գործունեության ծավալում | Առկա է | չկան | բաց | 5 տարի | 6000 |
| 19 | Ջրառատ | 08-097-0251-0001 | գյուղատնտեսական | խոտհարք | 4.99460 | II | անջրդի | Գյուղ.գործունեության ծավալում | Առկա է | չկան | բաց | 5 տարի | 6000 |
| 20 | Ջրառատ | 08-097-0251-0001 | գյուղատնտեսական | խոտհարք | 4.99158 | II | անջրդի | Գյուղ.գործունեության ծավալում | Առկա է | չկան | բաց | 5 տարի | 6000 |
| 21 | Ջրառատ | 08-097-0251-0001 | գյուղատնտեսական | խոտհարք | 4.99610 | II | անջրդի | Գյուղ.գործունեության ծավալում | Առկա է | չկան | բաց | 5 տարի | 6000 |
| 22 | Ջրառատ | 08-097-0251-0001 | գյուղատնտեսական | խոտհարք | 4.99877 | II | անջրդի | Գյուղ.գործունեության ծավալում | Առկա է | չկան | բաց | 5 տարի | 6000 |
| 23 | Ջրառատ | 08-097-0251-0001 | գյուղատնտեսական | խոտհարք | 4.99879 | II | անջրդի | Գյուղ.գործունեության ծավալում | Առկա է | չկան | բաց | 5 տարի | 6000 |
| 24 | Ջրառատ | 08-097-0253-0001 | գյուղատնտեսական | խոտհարք | 4.99778 | II | անջրդի | Գյուղ.գործունեության ծավալում | Առկա է | չկան | բաց | 5 տարի | 6000 |
| 25 | Ջրառատ | 08-097-0257-0002 | գյուղատնտեսական | Խոտհարք արոտ | 12.07355 | III | անջրդի | Գյուղ.գործունեության ծավալում | Առկա է | չկան | բաց | 5 տարի | 4000 |
| 26 | Ջրառատ | 08-097-0251-0001 | գյուղատնտեսական | Խոտհարք արոտ | 25.32547 | III | անջրդի | Գյուղ.գործունեության ծավալում | Առկա է | չկան | բաց | 5 տարի | 4000 |
| 27 | Ջրառատ | 08-097-0267-0001 | գյուղատնտեսական | Խոտհարք արոտ | 14.07904 | III | անջրդի | Գյուղ.գործունեության ծավալում | Առկա է | չկան | բաց | 5 տարի | 4000 |
| 28 | Ջրառատ | 08-097-0256-0001 | գյուղատնտեսական | արոտ | 8.54431 | III | անջրդի | Գյուղ.գործունեության ծավալում | Առկա է | չկան | բաց | 5 տարի | 4000 |
| 29 | Այգաբաց | 08-011-0142-0039 | գյուղատնտեսական | Վարելահող | 2.2 | III | անջրդի | Գյուղ.գործունեության ծավալում | Առկա է | չկան | բաց | 10 տարի | 5500 |
| 30 | Այգաբաց | 08-011-0142-0038 | գյուղատնտեսական | Վարելահող | 2.2 | III | անջրդի | Գյուղ.գործունեության ծավալում | Առկա է | չկան | բաց | 10 տարի | 5500 |
| 31 | Այգաբաց | 08-011-0125-0099 | գյուղատնտեսական | Վարելահող | 2.0 | III | անջրդի | Գյուղ.գործունեության ծավալում | Առկա է | չկան | բաց | 10 տարի | 5500 |
| 32 | Այգաբաց | 08-011-0142-0040 | գյուղատնտեսական | վարելահող | 2.5 | III | անջրդի | Գյուղ.գործունեության ծավալում | Առկա է | չկան | բաց | 10 տարի | 5500 |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 lusinmat001@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

15 հունիսի 2021 թվականի թիվ 38

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ԱԽՈՒՐՅԱՆԻ «ԱՅԳԱԲԱՑ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ԵՎ «ԿԱՄՈՅԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ԱՆԺԱՄԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքային սեփականություն հանդիսացող «Այգաբաց մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքը անհատույց,անժամկետ օգտագործման տրամադրել համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը/ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 26052021-08-0019, տրված 26 մայիսի 2021 թվական, հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, համայնք Ախուրյան, գյուղ Այգաբաց 9-րդ փողոց 36 մանկապարտեզ/:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքային սեփականություն հանդիսացող «Կամոյի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքը անհատույց, անժամկետ օգտագործման տրամադրել համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 21102020-08-0023, տրված 21 հոկտեմբեր 2020 թվական, հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, համայնք Ախուրյան գյուղ Կամո 1-ին փողոց 14 մանկապարտեզ/:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝**

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ժ. ԳԱԲՈՅԱՆ

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ա. ԴՐՄԵՅԱՆ

Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա. ՀԱՄԻԿՅԱՆ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Լ. ՂԱԶԱՐՅԱՆ

Տ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Մ. ՄՆԱՑՅԱՆ

Ա. ՄՔՈՅԱՆ

Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԼԻՊԱՐԻՏ ՏԻԳՐԱՆՅԱՆ**

/փոխարինող/

2021թ. հունիսի 15
գ. Ախուրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 lusinmat001@gmail.com

## ՈՐՈՇՈՒՄ

15 հունիսի 2021 թվականի թիվ 39

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱԻԶ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ/ԲՆԱԿԱՎԱՅՐ ԱԽՈՒՐՅԱՆ/ ՄԻՔԱՅԵԼ ԱՆՏՈՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿԱՄ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի 21-րդ կետի դրույթով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 39-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացի Միքայել Անտոնյանը, իր դիմումի համաձայն, ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված 193.44 քառակուսի մետր արտաքին մակերեսով առևտրի սրահը և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 08-007-0077-0012 կադաստրային ծածկագրով 0.036054 հեկտար մակերեսով հողամասի (վկայական 29032021-08-0036 անշարժ գույքի հասցեն՝Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Ախուրյանի խճուղի 59 առևտրի կենտրոն) ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքի ղեկավարի առաջարկությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը համարվող , օրինական ճանաչված 193.44 քառակուսի մետր արտաքին մակերեսով առևտրի սրահը և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի

մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-007-0077-0012 կադաստրային ծածկագրով 0.036054 հեկտար մակերեսով հողամասը (վկայական 29032021-08-0036 անշարժ գույքի հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Ախուրյանի խճուղի 59 առևտրի սրահ) գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով 1687592 (մեկ միլիոն վեց հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր իննսուներկու) դրամ ընդհանուր արժեքով, որից՝ 1497226/մեկ միլիոն չորս հարյուր իննսունյոթ հազար երկու հարյուր քսանվեց/ դրամը՝ շինության արժեք, 190366/մեկ հարյուր իննսուն հազար երեք հարյուր վաթսունվեց/ դրամը՝ հողամասի արժեք, ուղղակի վաճառքով օտարել կառուցապատողին, քաղաքացի՝Միքայել Անտոնյանին (բնակության հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան Վ. Տերյան փ. տուն 3):

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար՝ Արծրունի Իգիթյանին.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ քաղաքացու միջոցներով:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝**

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ժ. ԳԱԲՈՅԱՆ
Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Ա. ԴՐՄԵՅԱՆ
Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ա. ՀԱՄԻԿՅԱՆ
Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Լ. ՂԱԶԱՐՅԱՆ
Տ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Մ. ՄՆԱՑՅԱՆ
Ա. ՄՔՈՅԱՆ
Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԼԻՊԱՐԻՏ ՏԻԳՐԱՆՅԱՆ**
/փոխարինող/

2021թ. հունիսի 15
գ. Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 lusinmat001@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

15 հունիսի 2021 թվականի թիվ 40

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ/ԲՆԱԿԱՎԱՅՐ ԱԽՈՒՐՅԱՆ/ ՍԱՄՎԵԼ ՇԵԿՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի 21-րդ կետի դրույթով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման 39-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացի Սամվել Շեկոյանը, իր դիմումի համաձայն, ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված 50.05 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքի, 38.51 քառակուսի մետր ավտոտնակի՝ ընդամենը՝ 88.56 քառակուսի մետր, և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-007-0207-0002 կադաստրային ծածկագրով 0.008856 հեկտար մակերեսով հողամասի (վկայական 25032021-08-0043 անշարժ գույքի հասցեն՝Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան,Յ. Ղամբարյան փողոց 1-ին անցում թիվ 1) ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքի ղեկավարի առաջարկությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը համարվող, օրինական ճանաչված 50.05 քառակուսի մետր արտաքին մակերեսով անասնաշենքը, 38.51 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը, ընդհանուր մակերեսով 88.56 քառակուսի մետր և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-007-0207-0002 կադաստրային ծածկագրով 0.008856 հեկտար մակերեսով հողամասը (վկայական 25032021-08-0043 անշարժ գույքի հասցեն՝Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Յ. Ղամբարյան փողոց 1-ին անցում թիվ 1) գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով 199083 (մեկ հարյուր իննսունինը հազար ութսուներեք) դրամ ընդհանուր արժեքով, որից՝ 152323/մեկ հարյուր հիսուն երկու հազար երեք հարյուր քսաներեք/ դրամը՝ շինության արժեք, 46760/քառասունվեց հազար յոթ հարյուր վաթսուն/ դրամը՝ հողամասի արժեք, օտարել կառուցապատողին, քաղաքացի՝Սամվել Շեկոյանին (անձնագիր՝ AT 0622495 բնակության հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Ախուրյան համայնք,ՆորԱխուրյան 12 բ շենք , բն 1):

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար՝ Արծրունի Իգիթյանին.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առքուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ քաղաքացու միջոցներով:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝**

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ժ. ԳԱԲՈՅԱՆ

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ա. ԴՐՄԵՅԱՆ

Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա. ՀԱՄԻԿՅԱՆ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Լ. ՂԱԶԱՐՅԱՆ

Տ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Մ. ՄՆԱՑՅԱՆ

Ա. ՄՔՈՅԱՆ

Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԼԻՊԱՐԻՏ ՏԻԳՐԱՆՅԱՆ
/փոխարինող/

2021թ. հունիսի 15
գ. Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 lusinmat001@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

15 հունիսի 2021 թվականի թիվ 41

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԿԱՌՆՈՒՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Կառնուտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի դիմումը՝ դպրոցի ռազմագիտության կաբինետը վերանորոգելու և այն Կառնուտ գյուղի բնակիչ, Արցախյան պատերազմում զոհված Վասպուրական Գաբոյանի անվամբ անվանակոչելու վերաբերյալ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2021 թվականի բյուջեի Բաժին 01 Խումբ 6 Դաս 1«Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ(այլ դասերին չպատկանող)» ծրագրի «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» 4637 հոդվածից 350000 /երեք հարյուր հիսուն հազար/ դրամ տրամադրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Կառնուտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ ռազմագիտության կաբինետը վերանորոգելու համար:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝**

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ժ. ԳԱԲՈՅԱՆ

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ա. ԴՐՄԵՅԱՆ

Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա. ՀԱՄԻԿՅԱՆ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Լ. ՂԱԶԱՐՅԱՆ

Տ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Մ. ՄՆԱՑՅԱՆ

Ա. ՄՔՈՅԱՆ

Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԼԻՊԱՐԻՏ ՏԻԳՐԱՆՅԱՆ**

/փոխարինող/

2021թ. հունիսի 15
գ. Ախուրյան